

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հոգևոր ճեմարանի հարկի ներքո 1980—1981 ուսումնական տարեշրջանի փակման հանդեսը տեղի ունեցավ հունիսի 11-ին, հինգշաբթի օրը, ժամը 11-ին՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, որը նոր էր վերադարձել արտասահման Իր ուղևորությունից:

Հանդիսության նախագահության սեղանի շուրջ, Վեհափառ Հայրապետի կողքին, տեղ էին գրավել Տ. Սիոն, Տ. Հուսիկ, Տ. Գևորգ և Տ. Արսեն սրբազանները:

Հանդիսությանը ներկա էին նաև Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, մայրավանքի ղեկավար պաշտոնյաները, որոշ սաների ծնողներ և այլ հյուրեր:

Հանդիսությունն սկսվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով:

Այնա հոգևոր ճեմարանի ուսանողությունը կատարում է Հայաստանի պետական հիմնը: Հայրապետական աղոթքն ու պետական հիմնը ունկնդրվում են հոտնկայս:

Հոգևոր ճեմարանի քայլերգի կատարումով սկսվում է հանդիսության առաջին մասի գեղարվեստական բաժինը:

Ապա հոգևոր ճեմարանի ընդհանուր դաստիարակ Տ. Ստեփանոս աբղ. Չաքալյանը հանդես է գալիս բացման գեղեցիկ խոսքով:

Ա դասարանի ուսանող Գրիգոր Թովմասյանը դաշնամուրի վրա կատարում է «Նագելի» հայկական պարը, իսկ Բ դասարանի ուսանող Հովակիմ Քիլեճյանը՝ Արամ Խաչատրյանի «Անդանտինո»-ն և «Հայկական պար»-ը:

Հանդիսության երկրորդ բաժնում հոգևոր ճեմարանի ուսանողները միասին ասմունքեցին հատվածներ Գևորգ Էմինի 1980 թվականին Երևանում հրատարակված «Հավերժի ճամփորդը» գեղեցիկ ստեղծագործությունից, որի մեջ հեղինակը «արձակ շարադրանքով, բայց բանաստեղծական շնչով փորձել է ցույց տալ հայ ժողովրդի դարավոր պայքարը հանուն լուսավոր գալիքի և նրա վերածնդի փառավոր տարիները»:

Վերոհիշյալ ասմունքի գրական-երաժշտական ձևավորումը (կոմպոզիցիա) կատարել էր մեծ հաջողությամբ և սիրով հոգևոր ճեմարանի գրաբար լեզվի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու այարոն Երվանդ Մելքոնյանը:

Ուսանողները և մանավանդ մենասացները հուզումով և ապրումով արտասանում են կոմպոզիցիայի բանաստեղծական հատվածները, որոնք ունկնդրվում էին սարսուռով, բայց և ազգային հպարտության խորը զգացումով:

Մերթ ընդ մերթ կոմպոզիցիան ընդհատվում էր կոմիտասյան և այլ նշանավոր հայ երաժիշտների, ժողովրդական կամ հայրենաշունչ երգերով, որոնք հնչում էին մերթ թախծալի ու քնքույշ, մերթ՝ հզոր ու հաղթական:

«Հավերժի ճամփորդը» ստեղծագործության օրական-երաժշտական ձևավորումը կազմում էր գեղարվեստական մի կուռ ամբողջություն:

Այնուհետև պարոն Պարգև Շահբազյանը Վեհափառ Հայրապետին է ներկայացնում 1980—1981 ուսումնական տարեշրջանի համառոտ, բայց ամբողջական հետևյալ բովանդակալից զեկուցագիրը:

«Վեհափառ Տեր,
Գերաշնորհ և հոգեշնորհ հայրեր,
Գերագույն հոգևոր խորհրդի հարգարժան անդամներ,
Հարգելի դասախոսներ և ներկաներ,

Հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քահանա Պետրոսյանը այս տարվա ապրիլ ամսին, Ձերդ Սրբության բարեհաճ կարգադրությամբ, մեկնած լինելով Աթենք՝ տեղի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում ավարտական քննություններ հանձնելու, թույլ տվեք, որպես տեսչի պաշտոնակատար, ներկայացնել Ձեզ 1980—1981 ուսումնական տարվա ընթացքում ճեմարանից ներս կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների ամփոփ հաշվետվությունը:

Ողորմությամբ Աստուծո և Ձերդ Ս. Օծության աղոթքներով հոգևոր ճեմարանի հարկի տակ բոլորվեց ուսումնական մի տարի ևս բարի արդյունքներով, ճեմարանի դասախոսական կազմի նվիրյալ աշխատանքով և ուսանողության ջանասիրությամբ ու կարգապահությամբ:

Մայիսի 25-ից մինչև հունիսի 6-ը ներառյալ տեղի ունեցան տարեվերջի քննությունները, որոնց հաջողության համար բարեխղճությամբ նախապատրաստվել էին մեր ուսանողները: Այս մասին կանդրադառնանք ստորև:

Գոհունակությունը ունենք միաժամանակ հայտնելու, որ հոգևոր ճեմարանը, միշտ հավատարիմ իր կոչմանն ու առաքելությանը, Ձերդ Վեհափառության անմիջական հոգատարության ներքո, այս տարի ևս լծվելով իր հոգևոր, կրթական և դաստիարակչական աշխատանքին, գտնվեց իր պարտականությունների կատարման բարձրության վրա՝ առաջնորդված այն համոզումով, որ այդ աշխատանքը աստվածահաճո գործ է մեր Եկեղեցու պայծառության, մեր ժողովրդի կրոնական, ազգային և հայրենասիրական գիտակցության զարգացման ճանապարհին:

Մեծ է եղել դերը անցյալում և մեծ է դերը նաև այսօր մեր հոգևոր ճեմարանի: Սակայն, ինչպես Ավետարանն է ասում, «Հունձք բազում են և մշակք սակաւ»: Այս հոդությունը մեզ պետք է մղի այսուհետև ևս ջանք չխնայելու կրթական այս հաստատությունը առավել զորացնելու և բաղձալի մակարդակի հասցնելու համար, որպեսզի նա լավագույնս կատարի իրեն վստահված ազգօգուտ գործը. այն է՝ պատրաստել իրենց կոչումին գիտակից, ըստ ամենայնի զարգացած, ազգասեր ու հայրենասեր երիտասարդ հոգևորականներ՝ հոգալու համար մայր հողի վրա ապրող և ի սփյուռս աշխարհի ցրված հայ ժողովրդի հոգևոր-մշակութային կարիքները:

Վեհափառ Տեր, նոր եք վերադարձել Սուրբ Էջմիածին Կենտրոնական Եվրոպա և Ֆրանսիա Ձեր կատարած հովվապետական այցելությունից: Դուք անձամբ տարաք և բաշխեցիք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունը և վերածնված հայոց երկրի ողջույնը օտարության մեջ սփռված մեր ժողովրդի պանդուխտ զավակներին, ջերմացրիք նրանց հոգիները Ձեր հայրենաշունչ ելույթներով ու հայրական հորդորներով և վերադարձաք մայր հայրենիք հոգեպես միսիթարված անկասկած, որ մեր հեռավոր եղբայրներն ու քույրերը թեև ապրում են հայրենիքից հեռու, բայց հայրենիքի սիրով բաբախում՝ հավատարիմ իրենց Մայր Եկեղեցուն և ազգային սրբազան ավանդություններին:

Այսօր աճա կրկին մեր մեջ եք՝ շրջապատված Ձեր զավակներով: Այս առթիվ հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության սրտագին պարտականությունն է որդիական խորին շնորհակալություն հայտնել Ձերդ Սուրբ Օծությանը ճեմարանիս հանդեպ Ձեր ցույց տված հայրական հոգատարության, գուրգուրանքի և ուշադրության համար:

Այժմ թույլ տվեք, Վեհափառ Հայրապետ, ամփոփ գծերի մեջ ներկայացնել Ձեզ հոգևոր ճեմարանի այս տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների ընդհանուր պատկերը:

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՍԱՆԵԸ

1980—1981 ուսումնական տարվա սկզբին Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը ունեցել է 40 ուսանող, որոնցից 20-ը եղել են նոր ընդունվածներ:

Ուսումնական տարեշրջանի ընթացքում հեռացել են 7 ուսանող, որոնցից 5-ը մեկնել են սովետական բանակ՝ զինվորական ծառայության, իսկ երկուսը երկարատև հիվանդության պատճառով չեն կարողացել շարունակել իրենց ուսումը:

Այժմ հոգևոր ճեմարանի ուսանողների թիվը, ըստ դասարանների, հետևյալն է.

Ա դասարան՝ 6 ուսանող
Բ դասարան՝ 11 ուսանող

Գ դասարան՝ 12 ուսանող
Բ լսարան՝ 5 ուսանող

Ուսանողներից 8-ը օտարահպատակներ են՝ Սիրիայից, Լիբանանից և Իրաքից, իսկ մնացածները եկել են Հայաստանի տարբեր շրջաններից:

Այս տարի չենք ունեցել Ա և Գ լսարաններ:

Ուսանողների սույն թվին պետք է ավելացնել նաև քահանայից լսարանի 12 ուսանողներին, որոնք այս տարի հաջողությամբ ավարտեցին քահանայական երկամյա մասնավոր դասընթացը, որը կազմակերպվել էր Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ:

Անցյալ ուսումնական տարում իրենց ճեմարանական ուսման լրիվ դասընթացը հաջողությամբ ավարտեցին 4 ուսանողներ (Տիգրան սարկավագ Սարհատյան, Ստեփան սարկավագ Դավթյան, Հայկ սարկավագ Չիլինգարյան և Տ. Պետրոս քահանա Մալյան): Նրանց տրված են առանձին դիպլոմային աշխատանքներ զանազան թեմաներով, և հոգևոր ճեմարանի տեսչությունը հուսով է, որ նրանք բոլորն էլ ժամանակին կներկայացնեն և հաջողությամբ կըպաշտպանեն իրենց ավարտաճառերն ու կստանան ավարտական վկայականներ:

Ս. Ստեփանոսի տոնի առթիվ գերշ. Տ. Հուսիկ արքեպիսկոպոսի ձեռամբ այս տարի սարկավագ ձեռնադրվեցին Բ լսարանի հետևյալ 6 ուսանողները՝ Վարդան Բաղդասարյան, Սմբատ Արիստակեսյան, Մեսրոպ Խաչիկյան, Ալեքսան Թազայան, Ստեփան Կարապետյան և Աշոտ Պետրոսյան:

Հոգևոր ճեմարանի տեսչությունը և դասախոսական կազմը հույս ունեն, որ նրանք կլինեն իրենց կոչմանն արժանի, գիտակից, նվիրված և հավատարիմ սպասավորներ Հայ Եկեղեցու:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Հոգևոր ճեմարանի տեսչական և դասախոսական կազմերում այս տարի տեղի են ունեցել որոշ փոփոխություններ: Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ ճեմարանի տեսուչ նշանակվեց Տ. Եզնիկ քահանա Պետրոսյանը, իսկ ընդհանուր դաստիարակ՝ Տ. Ստեփանոս աբեղա Չաքալյանը: Ճեմարանում պաշտոնի կոչվեցին նաև պր. պր. Վաչագան Հովհաննիսյանը՝ որպես վերակացու, և Գրիգոր Կյոկչյանը՝ որպես ճեմարանի հաշվապահ-քարտուղար:

Ներկա ուսումնական տարում հոգևոր ճեմարանի ուսուցչական կազմը համալրվեց նոր դասախոսներով: Ամենայն Հայոց կաթողիկոսի բարեհաճ կարգադրությամբ ճեմարանում դասախոսելու հրավիրվեցին պատմական գիտությունների թեկնածու և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ պր. Հովհաննես Թոփուզյանը՝ որպես ընդհանուր պատմության դասախոս, պատմական գիտությունների թեկնածու դոցենտ պր. Սիմոն Կրկյաշարյանը՝ որպես հայ ժողովրդի պատմության դասախոս, պատմական գիտությունների թեկնածու և Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող պր. Արտաշես Մաթևոսյանը՝ որպես ձեռագրագիտության, աղբյուրագիտության և հնագրության դասախոս, Տ. Ղևոնդ քահանա Հարությունյանը՝ որպես երաժշտության դասախոս, պր. Բաբկեն Ներսիսյանը և պր. Վոլոդյա Աբրահամյանը՝ որպես հայոց լեզվի և հայ գրականության դասախոսներ:

Այս տարի նույնպես հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը գլխավորում է Ամենայն Հայոց Հայրապետը:

Վեհափառ Հայրապետի ցանկությամբ հոգևոր ճեմարանի տեսչությունը այս տարի ևս հրավիրեց տիկին Ռոզա Ղալաջյանին և պր. Թադևոս Ամարյանին, որպեսզի առաջինը մեքենագրության և երկրորդը դաշնամուրի առանձին պարապմունքներ անցկացնեն ճեմարանի մի շարք սաների հետ:

Հոգևոր ճեմարանի բժիշկն է պր. Հրաչ Մանուկյանը, իսկ գրադարանավարը՝ պր. Հենրիկ Բալյանը:

Հոգևոր ճեմարանի տեսչությունը և դասախոսական կազմը իրենց վրա դրված պարտականությունները կատարեցին ամենայն բարեխղճությամբ՝ աշխատելով ուսանողներին հաղորդել կայուն գիտելիքներ, նրանց մեջ մշակել հոգևոր և բարոյական բարձր արժանիքներ, ազգային-հայրենասիրական առողջ ոգի, որպեսզի ապագայում նրանք դառնան այս հաստատության անունը բարձրացնող արժանավոր եկեղեցականներ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔ

Ներկա տարեշրջանում հոգևոր ճեմարանի հարկի տակ տեղի են ունեցել հետևյալ զեկուցումները, հանդիսությունները և հանդիպումները:

1. Գրական երեկո՝ նվիրված Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքին և ստեղծագործություններին (զեկուցող՝ ճեմարանի Բ լսարանի ուսանող Վարդան Բաղդասարյան): Այս առթիվ տեղի ունեցավ նաև ճեմարանի սաների կողմից պատրաստված նկարչական ցուցահանդես Նարեկացու թեմաներով:

2. Հանդիպում բանաստեղծուհի Մարո Մարգարյանի հետ: Բանաստեղծուհու չափածո ստեղծագործությունների մասին զեկուցեց ճեմարանի Բ լսարանի ուսանող Սմբատ Արիստակեսյանը:

3. Հանդիպում բանաստեղծ Գևորգ Էմինի հետ: Բանաստեղծի ստեղծագործությունների մասին զեկուցումով հանդես եկավ ճեմարանի Բ լսարանի ուսանող Վարդան Բաղդասարյանը:

4. Զեկուցում «Անձնավորության մասին» (զեկուցող՝ սովետահայ արձակագիր և բարգմանիչ Կարպիս Սուրենյան):

5. Նոր տարվա տոնակատարություն:

6. Հանդիսություն Վարդանանց տոնի առթիվ (զեկուցող՝ հոգևոր ճեմարանի դասախոս պր. Բաբկեն Ներսիսյան):

7. Զեկուցում «20-րդ դարի մարդը և սիրտը» (զեկուցող՝ բժշկական գիտությունների դոկտոր Զավեն Դոլաբջյան):

8. Չորս դասախոսություններ հետևյալ թեմաների շուրջ՝ «Ադիաբեն», «Հայ Եկեղեցու առաքելականությունը», «Հայաստանյայց Եկեղեցին որպես անկախ, ինքնավար Եկեղեցի», «Հայ Եկեղեցին և Քաղկեդոնը» (զեկուցող՝ պատմական գիտությունների թեկնածու և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ պր. Հայկ Մելքոնյան):

9. Երկու զեկուցում Դավիթ Անհաղթի կյանքի և ստեղծագործության մասին՝ նրա ծննդյան 1500-ամյակի առթիվ (զեկուցողներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտորներ Սեն Արևշատյան և Գևորգ Խրոլոպյան):

10. Գրական-գեղարվեստական երեկո՝ ղեկավարությամբ հոգևոր ճեմարանի վերակացու Վաչագան Հովհաննիսյանի: Երեկոին հանդես եկան ճեմարանի մի շարք ուսանողներ իրենց չափածո և արձակ ինքնուրույն ստեղծագործություններով:

Բացի վերոհիշյալ զեկուցումներից, հանդիպումներից և հանդիսություններից, ուսանողների համար կազմակերպվել են գեղարվեստական և ուսուցողական բնույթի զանազան միջոցառումներ: Ընթացիկ տարում նրանք ներկա են եղել թատերական, երաժշտական ներկայացումների, նկարչական և այլ ցուցահանդեսների, այցելել են Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Երևանի պետական պատկերասրահ, պատմության թանգարան, Էջմիածնի Ազգագրական թանգարան, մեկնել են Արտաշատի շրջանի վանքերը՝ տեղի պատմական հուշարձանների արձանագրությունները կարդալու, զրոսապտույտներ են կազմակերպվել դեպի Գառնի, Գեղարդ, Մեծամոր, Ծաղկաձոր, Սարդարապատ, Խորվիրապ, Պարզ լիճ, Արագածի լիճ և այլն:

Հունիսի 12—15-ը ճեմարանի ուսանողությունը, Զերդ Սրբության բարեհաճ արտոնությամբ, եռօրյա պտույտի է մեկնելու Եղեգնաձորի շրջան՝ այցելելու տեղի պատմական վանքերն ու տեսարժան վայրերը:

Այս տարեշրջանում ճեմարանից ներս ուսանողների կողմից կարգապահության խախտման որևէ ծանրակշիռ դեպք տեղի չի ունեցել՝ Զերդ Սրբության ուշադրությանը հանձնելու: Եթե երբեմն եղել են մանր անկարգություններ կամ անգիտակցաբար կատարված թեթև զանցանքներ, դրանց կողքով տեսչությունը անշուշտ անտարբեր չի անցել՝ միշտ դիմելով խրատի, համոզման, դաստիարակման մեթոդին:

Հատուկ ուշադրություն է դարձվել ուսանողների առողջությանն ու ֆիզիկական կոփվածությանը: Բացի ամենօրյա մարմնամարզական վարժություններից, նրանք զբաղվել են ֆուտբոլով, բասկետբոլով, վոլեյբոլով և այլն: Կազմակերպվել են սեղանի թենիսի, վոլեյբոլի, լողի մրցումներ:

Վեհափառ Տեր, Ձեզ միշտ ուրախացրել և հոգեպես մխիթարել են ճեմարանի մեր սաների հաջողությունները: Ձեր գահակալության ամբողջ ընթացքում Դուք, որպես ուսուցչապետ և հոգատար հայր, անձամբ հետևել եք ճեմարանում տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներին՝ հոգևոր այս հաստատությունն իր կոչման ու առաքելության բարձրության վրա տեսնելու նախանձախնդրությամբ: Հոգևոր ճեմարանի տեսչությունը և դասախոսական կազմը վստահեցնում են Ձեզ, որ Զերդ Սրբության հույսերն ու բարի սպասումները կիրականանան, և մեր Եկեղեցու հոգևոր սպասավորների շարքերը հետզհետե կհամալրվեն երիտասարդ, հավատավոր ու խոստումնալից ուժերով՝ ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցու, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ի միխթարություն և հուրախություն հայ հավատացյալ ժողովրդի:

Այս առթիվ կցանկանայինք շնորհակալության խոսք ուղղել Մայր Աթոռի միաբանությանը, պաշտոնեությանը և բոլոր նրանց, որոնք իրենց բարոյական և նյութական աջակցությամբ ստար հանդիսացան մեզ՝ հեշտացնելով մեր աշխատանքները հոգևոր ճեմարանից ներս:

Վեհափառ Տեր, այս համառոտ զեկուցագիրը վերջացնելուց առաջ թույլ տվեք հոգևոր ճեմարանի տեսչության և դասախոսական կազմի անունից մի անգամ ևս

շնորհակալություն և ջերմ երախտագիտություն հայտնել Ձերդ Սրբությանը՝ հոգևոր ճեմարանի նկատմամբ Ձեր ցուցաբերած հայրական վերաբերմունքի և մշտական հոգածության համար: Ի դիմաց տեսչության և դասախոսական կազմի թույլ տվեք համբուրել Ձեր Սուրբ Աջը և մաղթել Ձեզ քաջառողջություն, բեղմնավոր գործունեություն, նորանոր փայլուն հաջողություններ Ձեր սուրբ առաքելության ճանապարհին և երկար ու երկար արևոտ տարիներ:

Այժմ թույլ տվեք Ձերդ Սրբությանը ներկայացնելու այս տարվա մեր առաջադեմ ուսանողների անունները՝ Ձեզանից ստանալու համար իրենց տրվելիք նվերները:

Բ լսարան—9,2 ընդհանուր միջինով իր դասարանում առաջինն է հանդիսանում Վարդան սարսավագ Բաղդասարյանը: 8,9 ընդհանուր միջինով երկրորդն է հանդիսանում Սմբատ սարկավագ Արիստակեսյանը:

Գ դասարան—9 ընդհանուր միջինով իր դասարանում առաջինն է հանդիսանում Մկրտիչ Ներսիսյանը: 8,6 ընդհանուր միջինով երկրորդն է հանդիսանում Հակոբ Մարտիրոսյանը:

Բ դասարան—9,6 ընդհանուր միջինով իր դասարանում առաջինն է հանդիսանում Ռազմիկ Իսախանյանը: 8,5 ընդհանուր միջինով երկրորդն է հանդիսանում Ռոբերտ Ադամյանը:

Օրինակելի վարքի համար ճեմարանի տեսչությունը ցանկանում է պարգևատրել երկու ուսանողների՝ Բ լսարանից Մեսրոպ սարկավագ Խաչիկյանին և Գ դասարանից՝ Սամվել Դանիելյանին:

Մայրենի լեզվի մեջ գերազանց առաջադիմության և գրական գնահատելի աշխատանքների համար պարգևատրում է Վարդան սարկավագ Բաղդասարյանին:

Նկարչական շնորհալի աշխատանքների համար պարգևատրում է Գ դասարանի ուսանողներ Մկրտիչ Ավանյանին և Վահան Խաչատրյանին:

Այժմ հրավիրում ենք Վեհափառ Հայրապետին՝ Իր օրհնության խոսքն ու պատգամն ուղղելու մեր սաներին:

Մրցանակի արժանացած ուսանողները աջահամբույրով և բոլոր ներկաների ծափողջույնների ներքո Վեհափառ Հայրապետից ստանում են իրենց մրցանակները:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 1980—81 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՓԱԿՄԱՆ ԱՌԹԻՎ

(11 հունիսի 1981 թ.)

Տիրոջ ողորմությամբ վերստին գտնվում ենք բոլորս այս հարկի տակ՝ նշելու համար 1980—81 թթ. ուսումնական տարեշրջանի ավարտը: Ուրախ եմ, անշուշտ, և երջանիկ, որ քսանվեցերորդ անգամ լինելով, ներկա եմ գտնվում այսպիսի հանդիսավոր մի պահի: Աշխատանքի մի շրջան է, որ ավարտվեց և ինչպես տեղեկացանք կարդացված զեկուցագրից, այս վերջին տասնամյակների շարքում, այս ուսումնական տարեշրջանը լավագույններից մեկն է հանդիսացել:

Գոհունակությամբ լսեցի ես զեկուցագիրը, զոր կազմած էր և կարդաց տեսչի պաշտոնակատար, ավագ դասախոսներից պ. Պարգև Շահբազյան: Մի անգամ ևս անդրադարձա, և ուրախությամբ հաստատեցի, ինչ որ կենսագործվել էր այս տարվա ընթացքում ճեմարանի հարկի տակ՝ թե՛ կրթական, թե՛ բարոյական ու կարգապահական տեսակետներից:

Առաջին հերթին պետք է Իմ գնահատանքի ջերմ խոսքը ուղղեմ ճեմարանի երիտասարդ տեսչին, որ գործուղված լինելով Աթենք բացակայում է այսօր: Տ. Եզնիկ քահանան, հակառակ իր շատ երիտասարդ տարիքին և, հետևաբար փորձի պակասին, ուշագրավ կերպով հաջող աշխատանք ծավալեց, որով արժանի է Իմ և բոլորիս գնահատանքին:

Նույն գնահատանքի խոսքը պիտի ուղղեմ նաև ընդհանուր դաստիարակ Տ. Ստեփանոս աբեղային, որ իրեն հատուկ, հոգու ջերմությամբ, նախաձեռնությամբ և հոգատարությամբ կատարեց իր պարտականությունները սիրով և նվիրումով:

Իմ անվերապահ և ջերմ գնահատանքը ցանկանում եմ այս պահին ներկայացնել նաև մեր հոգևոր ճեմարանի հարգարժան դասախոսներին, որոնք մասնագիտական ձեռնհասությամբ և բարեխղճությամբ իրենց պարտականությունը կատարեցին լիությամբ:

Կարծում եմ, կարող եմ նաև ավելացնել Իմ գոհունակությունը ուսանողության նկատմամբ, որոնք, ընդհանրապես, բարեխղճությամբ, աշխատասիրությամբ հետևեցին դասերին և, մանավանդ, որևէ առիթ չտվեցին ոչ ճեմարանի ղեկավարության, ոչ Մայր տաճարի լուսարարապետության, որ գանգատներ լինեն կարգապահական տեսակետից:

Այդ ուղղությամբ գնահատելի աշխատանք կատարեցին նաև վերակացուները,

իբրև անմիջական օգնականները ընդհանուր դաստիարակ հայր սուրբի:

Անավասիկ, այս արդյունքներով, մենք փակում ենք այս տարեշրջանը, այն հաստատ համոզումով, որ հառաջիկա տարի նույն մակարդակի վրա, և քայլ առ քայլ էլ ավելի բարձր, պիտի շարունակի իր գործունեությունը Մայր Աթոռիս հոգևոր ճեմարանը:

Իր զեկուցման մեջ հիմնավորված կերպով, դասախոս Շահբազյանը, վեր առավ մեր հոգևոր ճեմարանի առաքելության կարևորությունը մեր Եկեղեցու և մեր ժողովրդի կյանքում այսօր, թե՛ Հայաստանում, թե՛ արտասահմանում: Ուղիղ բնորոշումներ, ուղիղ գնահատականներ էին: Մնում է որ հոգևոր ճեմարանը, գիտակից իր առաքելության, կարողանա համապատասխան մակարդակի հոգևորականներ հասցնել մեր Եկեղեցուն, որոնց այնքան կարիք ունի մեր ժողովուրդը թե՛ մեզ մոտ և թե՛ ի սփյուռս աշխարհի: Ամեն տեղ պակաս ունենք հոգևորականների: Շատ տեղեր եկեղեցիները փակ են, որովհետև հոգևորական չկա:

Դժբախտաբար, հակառակ ի կատար ածված բոլոր ճիգերի, բոլոր զոհողությունների, մեր Եկեղեցու հոգևոր կրթարանները չեն կարողանում տակավին, բավարարել Եկեղեցու պահանջները: Բավարարել է հարկավոր երկու իմաստով: Մեզ անհրաժեշտ է հոգևորականներ պատրաստել, կուսակրոն թե ամուսնացյալ, և՛ իբրև քահանա և՛, մանավանդ, իբրև որակ:

Ամեն տեղ, որտեղ հոգևորականը, իրապես, սիրով, նվիրումով աշխատում է, ծույլ չէ, փողասեր չէ, կարգապահ է և իր առաքելության գիտակցությունը ունի, այդ եկեղեցիներում հոգևոր աշխատանքը սքանչելի արդյունքներ է տալիս և ժողովուրդը գոհ է լինում և գնահատանքով շրջապատում է հոգևոր սպասավորին:

Այս մտքերը արտահայտելով Ես գոհունակությամբ պետք է հիշեմ այստեղ որ մեր հոգևոր ճեմարանի վերջին երկու-երեք տարիների հունձքը հույժ միսիթարական եղավ: Անոնք դարձան մշակներ առանց ամոթո, ժիր ու նվիրված, որոնք մեզ մոտ կամ արտասահմանում, թե՛ ուսանում են և թե՛ ծառայում մեր եկեղեցիներին ինչպես Վիեննայում, Գերմանիայում, Ֆրանսիայում և Անգլիայում:

Անձնապես Ինձ համար հույժ միսիթարական է հաստատել այս իրողությունը: Այսօրվա աշխարհը մեր, ընկերային կյանքը, մարդկանց զարգացման բարձր մակարդակը առավել ևս անհրաժեշտ են դարձնում որ հոգևորականը քայլ պահի մեր ժամանակների հոգևոր-մտավոր զարգացման ընթացքի հետ, իր գիտելիքներով, իր ընդհանուր զարգացմամբ և իր բարոյական արժանիքներով: Այն ատեն է, որ ժողովուրդը կհարգի ու կգնահատի նրան:

Այս բոլորը բերում են մեզ այն եզրակացության, որ մեր կրթական գործը ուղիղ ճանապարհների վրա է գտնվում: Հայ եկեղեցական ասպարեզը հոգևոր և ազգային ծառայության սքանչելի մի ճանապարհ է, որով պետք է առաջ ընթանան մեր ճեմարանի շրջանավարտները ապագա իրենց հոգևոր ծառայությանց կյանքում:

Այս մի քանի խորհրդածություններով և հորդորներով Ես կրկին շնորհավորում եմ հոգևոր ճեմարանի տեսչությանը և դասախոսական կազմը, անցնող տարեշրջանի հաջող ավարտի առիթով և հայցում եմ Աստուծո օրհնությունը մեր բոլորիս վրա, որպեսզի մշտանորոգ եռանդ, ու ներշնչանք ունենանք շարունակելու մեր սրբազան գործը:

Թող Աստված պահի, պահպանի անշարժ և անսասան Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը այժմ և միշտ: Ամեն:

Հոգևոր ճեմարանի ամավերջի հանդիսությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Ճեմարանի առաջին հարկում, սերտողության սրահում, կազմակերպվել էր այս առթիվ Գ դասարանի ուսանողներ Մկրտիչ Ասլանյանի և Վահան Խաչատրյանի աստվածաշնչական թեմաներին նվիրված ավելի քան 50 գունավոր նկարների ցուցահանդեսը: Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է ցուցահանդես՝ գոհ և լավագույն տպավորություններով՝ Իր օրհնությանն արժանացնելով ուսանողների աշխատանքները:

Այսպիսով, հոգևոր ճեմարանը փակում է իր դռները 1980—1981 ուսումնական տարեշրջանից հետո ամառային արձակուրդների համար:

Հունիսի 12—14 օրերին ճեմարանի ուսանողությունը մեկնում է երեքօրյա արշավի դեպի Եղեգնաձոր՝ պատմական Վայոց ձոր, ուր կայցելեն շրջանի վանքերն ու եկեղեցիները, տեսարժան վայրերը:

Հույսով ենք, որ սաների մի մասը արձակուրդի օրերին իրենց ծնողների մոտ կբոլորեն հանգստի մի լավ շրջան, իսկ մյուս մասը՝ հուլիս-օգոստոս ամիսներին կծառայեն Մայր Աթոռում և ներքին թեմերում ու սեպտեմբերին բոլոր ուսանողները կվերադառնան իրենց ուսումը շարունակելու՝ ավելի թարմացած, առույգացած և ուսման ավելի մեծ ծարավով: